ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ՀԱՅ ԵՎ ՂՊՏԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ

Իր հոտին հովվապետական հերթական այցելությունը տալու նպատակով Ամերիկա մեկնած Ղպտի Եկեղեցու Պատրիարք Շենուդա Գ-ն Նյու Յորքում հանդիպում ունեցավ այդտեղ իր ապաքինման ընթացքը շարունակող Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ:

Մեր Եկեղեցիները, որոնք միմյանց շատ մոտ են աստվածաբանական ըմբռնումներով և պատմական հնամենիությամբ, վերջին տարիներին միասնաբար քաջալերում են Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների հարակցությունը: Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի մասնակցությամբ Նյու Յորքի Սուրբ Վարդան Մայր տաճարում տեղի ունեցած կարճ արարողությունից հետո, երկու Եկեղեցիների հոգևոր պետերը ներկաներին պատմեցին իրենց գործունեության, էկումենիկ շարժման բնագավառում իրենց նվաճումների, ինչպես նաև փոխադարձ համագործակցության մասին:

Ինչպես տեղեկանում ենք Առաջնորդարանի դիվանի հաղորդագրությունից, խոսակցության գլխավոր նյութը եղել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի վերջերս ավարտված ընդհանուր համագումարը:

Ըստ Ուղղափառ Եկեղեցիների կողմից հարուցված հարցի, Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը շեղվել է քրիստոնեության հիմնական ուսուցումներից ընդհանրապես և ուղղափառությունից՝ մասնավորապես:

Շենուդա Գ Պատրիարքը և Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը համաձայնել են, որ եղած առարկությունները բավականին լուրջ են, սակայն միաժամանակ երկու հովվապետները գտնում են, որ Հայ Առաքելական և Ղպտի Ուղղափառ Եկեղեցիների հրաժարումը այդ Խորհրդից չի ծառայի քրիստոնեական միասնությանը:

Հանդիպման վերջում երկու հոգևոր առաջնորդներն ուրախությամբ նշել են, որ մեր երկու Պատմական Եկեղեցիների եղբայրական փոխհարաբերություններն ունեն ոչ միայն դարավոր և ուսանելի անցյալ, այլև շարունակվող ներկա և խոստումնալից ապագա:

ԸՍՏ ՀՕՖ-Ի ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ